# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

## ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-25/81 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

28 օգոստոսի 2025թ.

2025թ. օգոստոսի 7-ից 28-ը ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում տեղի ունեցավ ծրագրի գնահատման ծառայության ձեռքբերման ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-25/81 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Գ. Համբարձումյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Միջազգային կապերի դեպարտամենտի պետ, AFISHE նախագծի համակարգող, |
| Գ. Մարմարյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Կենսագիտության և ընդհանուր քիմիայի ամբիոնի դոցենտ, AFISHE նախագծի անդամ, |
| Ա. Հարությունյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոնի վարիչ, AFISHE նախագծի անդամ, |
| Օ. Տերտերյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Միջազգային կապերի դեպարտամենտի առաջատար մասնագետ, AFISHE նախագծի անդամ, |
| Զ. Պողոսյան՝ | «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի Միջազգային կապերի դեպարտամենտի առաջատար մասնագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Գ. Համբարձումյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
2. Ընթացակարգին ներկայացված հայտեր պարունակող ծրարները գնահատելու մասին:
3. Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
4. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
5. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:
6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:
7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:
8. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. օգոստոսի 7-ին, ՀՀ, ք. Երևան, Տերյան 74 հասցեում գտնվող «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շենքում ժամը 14:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված նախահաշվային գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1-ին | Ծրագրի գնահատման ծառայություններ | 2,100,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԾՐԱՐՆԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱԱՀ-ԳՀԾՁԲ-25/81 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձ/ը/ինք/ /այսուհետ՝ նաև մասնակից/ներ/ը/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Հեռախոս | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Ղարիբ Հարությունյան Հովհաննեսի» Ա/Ձ | ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Վ. Սարգսյան 1/25 | +374 93972993 | gharutyunyan84@gmail.com | 83450305 |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը

կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԾՐԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Գնման հայտով սահմանված գնման գինը | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1-ին | Ծրագրի գնահատման ծառայություններ | «Ղարիբ Հարությունյան Հովհաննեսի» Ա/Ձ | 2,100,000.00 | 1,720,000.00 | 0 | 1,720,000.00 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

2025թ. օգոստոսի 20-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:
2. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:
3. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
4. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|

| | | |
|---|---|---|
| 1-ին | «Ղարիբ Հարությունյան Հովհաննեսի» Ա/Ձ | բավարար |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված մասնակիցներին, որոնք ներկայացված են ստրև բերվող աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չափաբաժնի N | Մասնակցի Անվանում | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է "X" | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|
| 1-ին | «Ղարիբ Հարությունյան Հովհաննեսի» Ա/Ձ | X | 1,720,000.00 |

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 4-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Սարգսյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

2025թ. օգոստոսի 20-ին Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետ չկիրառել:

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Գ. Համբարձումյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Գ. Մարմարյան ____________

Ա. Հարությունյան ____________

Օ. Տերտերյան ____________

Ջ. Պողոսյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Սարգսյան ____________